**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**10.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/38-2**
**ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի**

ք. Մասիս  << 29 >> մայիսի 2026թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Հակոբյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ԷԴԱՐ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մեսրոպյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 10.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/38-2 ծածկագրով գնման պայմանագրի 7.10 կետը և հիմք ընդունելով 20.05.2026թ. զեկուցագիրը (մտից N 5798)՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Մասնակի լուծել 10.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/38-2 ծածկագրով գնման պայմանագիրը Մասիս համայնքի Սիս բնակավայրի մանկապարտեզի մասնակի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների մասով՝ պայմանագրի ընդհանուր գինը նվազեցնելով 499 000 (չորս հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամի չափով:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և ֆինանսական հատկացումների նվազեցման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| **Մասիսի համայնքապետարան** | **«ԷԴԱՐ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ** |
| **ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4** | **Արարատի մարզ, գ. Նորաշեն, Ն. Ստեփանյան 67** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 900 432 000 348** | **Հ/Հ 19300311114600** |
| **ՀՎՀՀ 04240324** | **ՀՎՀՀ 04236472** |
| Ն. Հակոբյան_______________ /ստորագրություն/ Կ.Տ | Գ. Մեսրոպյան_______________ /ստորագրություն/ Կ.Տ |